Funded by the European Union

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ - 2024

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը և պարտադիր չէ,
որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2024

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC), Իրավաբանների հայկական ասոցիացիան և Ագորա Սենթրլ Յուրոփ կազմակերպությունները համագործակցաբար իրականացնում են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնմանը, խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացները:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային նախաձեռնություն է: Կարևորելով հանրային միջոցներով հանրության համար իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, հասցեականությունը, իրականացման արդյունավետությունը և հանրության գոհունակությունը՝ Կենտրոնը փորձում է պրոֆեսիոնալ ներդրում ունենալ քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Ծրագրի շրջանակներում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնն իրականացնում է բյուջետային գործընթացների վերաբերյալ քաղաքացիական հասարակության տեղեկացվածության մակարդակի բարելավման, բյուջետային գիտելիքի և բուջետային գործընթացին մասնակցելու կարողությունների ձևավորման, քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներին ՔՀԿ-ների արդյունավետ մասնակցության աջակցության միջոցառումներ, այդ թվում՝ բյուջետային տեղեկատվության պարզեցումներ և այլն:

Սոցիալական պաշտպանության 2024 թվականի պարզեցված բյուջեն վերլուծական հրապարակում է՝ ուղղված հանրության լայն շրջանակի: Այն նպատակ ունի բարձրացնել հանրության իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել քաղաքացիական հասարակության և հանրային հատվածի արդյունավետ երկխոսության և տեղեկացված քննարկումների համար:

Տեղեկատվության հիմնական աղբյուրը պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներն են և պետական բյուջեի կատարման հաշվետվությունները, պաշտոնական այլ փաստաթղթեր և տվյալներ: Պետական բյուջեին վերաբերող 2024 թվականի համար բերվող տվյալները ծրագրային են, 2023-ի և նախորդող բոլոր տարիների տվյալները փաստացի են: Փաստաթղթում սոցիալական պաշտպանության ծախսերը նույնականացվում են սոցիալական պաշտպանության բյուջետային ծրագրերին ուղղված ծախսերի հանրագումարի հետ:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2024

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
ԵՄ	Եվրոպական միություն
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ՀԽՍՀ	Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

8 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

9 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿՇԻՌԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ

10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

11 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

13 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

14 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

15 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- 2024 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 2,723.6 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 3,206.5 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով՝ 482.9 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի համապատասխանաբար 25.9, 30.5 և 4.6 տոկոսը:
- Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում ներկայացված են Սոցիալական պաշտպանության ծրագրերով, որոնք համակարգվում են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) կողմից:
- Սոցիալական պաշտպանությունը շարունակում է լինել պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը, որի հիմնական նպատակն է երկրում ծայրահեղ աղքատության վերացումը, աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:
- 2024 թվականին սոցիալական պաշտպանության ծրագրերին կուղղվի 795.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է ավելի քան 89.7 մլրդ դրամով կամ 12.7 տոկոսով:
- ՀՆԱ-ի նկատմամբ սոցիալական ծրագրերին ուղղված ծախսերի կշիռը 2024-ին կկազմի 7.6 տոկոս՝ 2019-2023թթ. 7.8 տոկոս միջին մակարդակի պայմաններում, իսկ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ՝ 24.8 տոկոս՝ նախորդող 5 տարիների 27.9 տոկոս միջին մակարդակի պայմաններում:
- Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորման աճը համեմատաբար կայուն է: 2020-2024թթ. սոցիալական պաշտպանության ծրագրերի ֆինանսավորման միջին տարեկան աճը կազմում է 12.1 տոկոս և զիջում է նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը 2.6 տոկոսային կետով:
- Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականությունը 2024-ին կիրականացվի 17 բյուջետային ծրագրերի միջոցով:
- Ֆինանսավորման ծավալով սոցիալական պաշտպանության ծրագրերի շարքում առաջատարները սոցիալական ապահովության ծրագրերն են, որոնք են՝ **Կենսաթոշակային ապահովությունը** և **Սոցիալական ապահովությունը**: Այս ծրագրերի ֆինանսավորումը կազմում է ԱՍՀՆ ծրագրերի բյուջեի համապատասխանաբար 62.1 և 14.2 տոկոսը:
- Կենսաթոշակային ապահովության ծավալների 59.8 տոկոսն ուղղվում է աշխատանքային կենսաթոշակներին: 2024-ին կենսաթոշակների աճ չի նախատեսվում: Աշխատանքային միջին կենսաթոշակը 2024-ին կկազմի 50,414 դրամ՝ նախորդ տարվա 47,593 դրամ փաստացի մակարդակի դիմաց:
- Չնայած 2024-ին կենսաթոշակների աճ չի սպասվում, սակայն կառավարությունը ՄԺԾԾ ժամանակահատվածում թիրախավորում է աշխատանքային կենսաթոշակների բարձրացում՝ նպատակադրելով 2026-ին ապահովել միջին ամսական կենսաթոշակի՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին հավասար մակարդակ:

- Սոցիալական ապահովության ծրագրի շրջանակներում ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ են ստանում թվով 105,994 քաղաքացի:
- Ֆինանսավորման ծավալներով հաջորդող դիրքերում են **Ժողովրդագրական իրավիճակի բարելավում** և **Անապահով սոցիալական խմբերին աջակցություն** բյուջետային ծրագրերը՝ համապատասխանաբար 8.7 և 4.0 տոկոս կշիռներով:
- Կտրուկ աճ է առկա 1) մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի, 2) երեխայի ծննդյան միանվագ նպաստի և 3)50,000 դրամ դրամական աջակցություն ստացող, ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքների նպաստի շահառուների թվաքանակում:
- Անապահով սոցիալական խմբերին աջակցություն ծրագրին կուղղվի ավելի քան 31,9 մլրդ, որը 19,3 տոկոսով ավել է նախորդ տարվա փաստացի կատարված ծախսերից: Այս ծրագրի բյուջեն կազմում է սոցիալական պաշտպանության բյուջեի 4 տոկոսը:
- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների միջին մեծությունը 2024-ին կկազմի 37,000 դրամ: Նպաստ կստանան 66,849 ընտանիքներ, այդ թվում՝ 3,183 ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիք:
- 2024 թվականի սոցիալական պաշտպանության ծախսերի աճը գերազանցապես պայմանավորված է Կենսաթոշակային ապահովություն և Սոցիալական ապահովություն ծրագրերի ֆինանսավորման ծավալների աճով: Այս ծրագրերի ֆինանսավորման ծավալները կաճեն համապատախանաբար 53,2 և 21,7 մլրդ դրամով:
- Կենսաթոշակային ապահովություն և Սոցիալական ապահովություն ծրագրերը միասին ապահովում են ոլորտի ֆինանսավորման ծավալների աճի 83.5 տոկոսը: Նկատենք, որ այս աճի ավելի քան 25 տոկոսը պայմանավորված է ԼՂ-ից բռնի տեղահանված կենսաթոշակառուների և նպաստառուների ՀՀ համակարգերում ընդգրկմամբ: Կենսաթոշակային ապահովության ծրագրի ԼՂ շահառուների թվաքանակը կազմում է 21,696 մարդ:
- Հաջորդում են ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը և Անապահով սոցիալական խմբերի աջակցությանն ուղղվող ռեսուրսների աճերը, որոնք միասին ապահովում են աճի 22.8 տոկոսը: Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագրի աճը խոսում է բազմազավակության վրա ծրագրի աճող ազդեցության մասին:
- 2024-ին կաճի երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացող ընտանիքների քանակը: Մասնավորապես, երրորդ և ավելի երեխաների շահառուները կաճեն 9.9 տոկոսով՝ կազմելով 14,037 ընտանիք:
- Մայրության նպաստ ստացող շահառուների թիվը կաճի 12 տոկոսով և կկազմի 40,118 անձ, այդ թվում՝ 2,118 ԼՂ-ից տեղահանված անձ:
- Էապես կաճեն երեխաների խնամքի և աջակցության ծառայությունների տրամադրմանն ուղղվող ֆինանսական ռեսուրսները:
- Կմեկնարկի տարեց անձանց և երեխաներին շուրջօրյա խնամք մատուցող ՊՈԱԿ-ների շենքային պայմանների բարելավման աշխատանքներ:

- Հաշմանդամություն ունեցող անձանց համար կմեկնարկի նոր՝ «Անձնական օգնականի ծառայությունը»:
- Կշարունակվի ԼՂ-ից տեղահանված ընտանիքների ժամանակավոր կացարանում բնակվելու և կոմունալ ծառայությունների ծախսերի կատարման օժանդակելու համար սոցիալական աջակցության տրամադրումը՝ 3 ամիս ժամկետով՝ ամսական 50,000 դրամի չափով:
- Կշարունակվի նաև ԼՂ-ի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման աջակցությունը: 2 մլրդ դրամ կուղղվի 4,032 ընտանիքների անշարժ գույքի ձեռք բերման կամ անհատական բնակելի տան կառուցման աջակցությանը:
- Սահմանամերձ բնակավայրերում բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցություն կստանան 540 ընտանիքներ:
- Կշարունակվի Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծառայությունների մատուցումը: Ծառայություններ կստանան 275 շահառուներ:
- Ավանդների փոխհատուցմանը 2024թ. կուղղվի 1.5 մլրդ դրամ, որի շրջանակում «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող և նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված ավանդների փոխհատուցում կստանան շուրջ 8000 շահառու. փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչև 1941թ. հունիսի 30-ը ներառյալ ծնված ավանդատուները:
- Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի շրջանակներում 10.6 մլրդ դրամ կուղղվի 147,493 պետական մարմինների աշխատակիցներին սոցիալական փաթեթների տրամադրմանը:
- Ավարտին է մոտենում ՀԲ ֆինանսավորմամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ վարկային ծրագիրը, որի շրջանակներում 2024-ին կշարունակվեն և ավարտին կհասցվեն ՄՍԾ-ների վերանորոգման և կահավորման որոշակի աշխատանքներ:
- Սոցիալական պաշտպանության քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացմանը կուղղվի 8.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 3.1տոկոսով: Ոլորտային հետազոտությունների իրականացմանը և կադրերի վերապատրաստումներին կուղղվի 149.7 մլն դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեն և դրա տարեկան աճը (%) 2019-2024թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- 2024 թվականին պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի ֆինանսավորմանը կուղղվի 795.3 մլրդ դրամ: 2024 թվականին նախորդ տարվա փաստացի մակարդակի համեմատ այս ծրագրերի պետական ֆինանսավորումը կաճի ավելի քան 89.7 մլրդ դրամով կամ 12.7 տոկոսով:
- Սոցիալական պաշտպանության ֆինանսավորումն աճող է: 2020-2024 թվականների համար ֆինանսավորման ծավալների միջին տարեկան աճը կկազմի 12.1 տոկոս: Արդյունքում 2024-ի մակարդակը 2019-ին կգերազանցի մոտ 1.8 անգամ կամ 341.4 մլրդ դրամով:

- 2024 թվականին սոցիալական պաշտպանության բյուջեն կկազմի ՀՆԱ-ի 7.6 տոկոսը, ինչը նախորդ տարվա համեմատ բարձր է 0.2 տոկոսային կետով:
- 2024-ին նախորդող 5 տարիների ընթացքում Սոցիալական պաշտպանության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության միջին մակարդակը կազմել է 7.8 տոկոս:

Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեի կշիռը ՀՆԱ-ում, 2019-2024թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿՇԻՌԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ

- 2024 թվականին սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը պետական ծախսերում կկազմի 24.8 տոկոս, որը նախորդ տարվա համեմատությամբ ցածր է 2.9 տոկոսային կետով:
- Սոցիալական պաշտպանության ծախսերի կշիռը բյուջետային ծախսերում 2024-ին ցածր է նախորդող բոլոր հինգ տարիների համեմատությամբ: 2019-2023 թվականներին Սոցիալական պաշտպանության բյուջե/բյուջետային ծախսեր հարաբերակցության միջին մակարդակը կազմել է 27.9 տոկոս:
- Սոցիալական պաշտպանության ծախսերի միջին տարեկան աճը զիջում է պետական բյուջեի համապատասխան ցուցանիշը: 2020-2024 թվականներին պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճը կազմել է 14.7 տոկոս՝ սոցիալական պաշտպանության բյուջեի 12.1 տոկոս մակարդակի պայմաններում:

Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում, 2019-2024թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեն պետական բյուջեի ընդամենը ծախսերում, 2019-2024թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

- Սոցիալական պաշտպանությունը պետական ծախսերի ամենամեծ գործառական ուղղությունն է:
- Բյուջետային բոլոր մյուս բաժինները զիջում են սոցիալական պաշտպանությանը: Մասնավորապես՝ պաշտպանության ոլորտի ծախսեր/պետական ծախսեր հարաբերակցությունը կազմում է 17.4 տոկոս՝ զիջելով 7,4 տոկոսային կետով, կրթության կշիռը 9 տոկոս է՝ զիջելով 15,8 տոկոսային կետով, տնտեսական հարաբերությունները զիջում է 16,5 տոկոսային կետով և այլն:
- Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորման աճը համեմատաբար կայուն է:
- Ինչպես տեսնում ենք ստորև գծապատկերից, 2024-ին սոցիալական պաշտպանության ծախսերի աճը չորրորդն է ընտրված ոլորտների աճերի համեմատությամբ: Նկատենք, որ 2023-ին առկա է լիովին տարբերվող իրավիճակ, երբ սոցիալական պաշտպանությունը մյուս ոլորտների նկատմամբ դրսևորել է առաջանցիկ աճ::

Առանձին ոլորտների մասնաբաժինը պետական բյուջեի ընդամենը ծախսերում, 2024թ., գործառական դասակարգում, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Առանձին ոլորտների աճը 2019-2024թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Հ/Հ	Ծրագիր	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024 տոկոս	2024/2023 տոկոս
1	Կենսաթոշակային ապահովություն	440,752	493,903	62.1	+12.1
2	Սոցիալական ապահովություն	91,136	112,871	14.2	+23.8
3	Ժողովրդագրական վիճակի բարելավում	53,594	68,870	8.7	+28.5
4	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	26,768	31,942	4.0	+19.3
5	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	21,707	22,557	2.8	+3.9
6	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	28,746	15,000	1.9	-47.8
7	Պարգևավճարներ և պատվովճարներ	9,800	11,105	1.4	+13.3
8	Սոցիալական փաթեթների ապահովում	9,224	10,619	1.3	+15.1
9	Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	8,342	8,604	1.1	+3.1
Ընդամենը սոցիալական պաշտպանության ծրագրեր		705,605	795,325	100	+12.7

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (շարունակություն)

Հ/Հ	Ծրագիր	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024 տոկոս	2024/2023 տոկոս
10	Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն	4,021	5,029	0.63	+25.1
11	Բնակարանային ապահովում	2,573	4,837	0.61	+88.0
12	Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի կազմակերպում և կացարանով ապահովում	3,575	4,531	0.57	+26.7
13	Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	2,055	2,299	0.29	+11.8
14	Ավանդների և այլ փոխհատուցումներ	874	1,515	0.19	+73.4
15	Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ	1,402	854	0.11	-39.1
16	Զբաղվածության ծրագիր	892	638	0.08	-28.4
17	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր	144	150	0.02	+3.7
Ընդամենը սոցիալական պաշտպանության ծրագրեր		705,605	795,325	100	+12.7

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

- Սոցիալական պաշտպանության ոլորտի ամենամեծ բյուջետային ծրագիրը Կենսաթոշակային ապահովություն ծրագիրն է, որին կուղղվի բյուջետային հատկացումների 62.1 տոկոսը:
- Հաջորդում են Սոցիալական ապահովություն, Ժողովրդագրական վիճակի բարելավում և Անապահով սոցիալական խմբերին աջակցություն բյուջետային ծրագրերը՝ համապատասխանաբար 14.2, 8.7 և 4 տոկոս կշիռներով:
- Ընդհանուր առմամբ, նշված ամենամեծ չորս ծրագրերն ապահովում են սոցիալական պաշտպանության բյուջեի 89 տոկոսը:



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Սոցիալական պաշտպանության բյուջեի աճը 2024-ին կկազմի 89.7 մլրդ դրամ:
- Սոցիալական պաշտպանության բյուջեի աճը հիմնականում պայմանավորված է չորս բյուջետային ծրագրերի ֆինանսավորման ծավալների աճով:
- Սոցիալական պաշտպանության բյուջեի աճի ավելի քան 83.5 տոկոսը բաժին է ընկնում Կենսաթոշակային ապահովություն և Սոցիալական ապահովություն ծրագրերին:
- Հաջորդում են ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը և Անապահով սոցիալական խմբերի աջակցությանն ուղղվող ռեսուրսների աճերը, որոնք միասին ապահովում են աճի 22.8 տոկոսը:

ԾՐԱԳԻՐ 1102 - Կենսաթոշակային ապահովություն

493.9 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Կենսաթոշակի իրավունքի իրացում

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Կենսաթոշակների նշանակման և վճարման գործընթացի ապահովում

Կենսաթոշակային ապահովություն ծրագիրը ֆինանսավորման ծավալով հանդիսանում է սոցիալական պաշտպանության ոլորտի ամենամեծ բյուջետային ծրագիրը, ինչպես նաև երկրորդ ամենամեծ բյուջետային ծրագիրն է պետական բյուջեում:

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ	440,752.4	493,902.9	+12.1 ↑
Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում	70.5	72.4	+2.6 ↑
Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովում	796.3	693.9	-12.9 ↓
Կենսաթոշակների ձևաթղթերի տպագրություն	0.7	-	-
Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	36,148.6	41,277.1	+14.2 ↑
Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ	648.4	707.6	+9.1 ↑
Աշխատանքային կենսաթոշակներ	256,357.1	295,468.0	+15.3 ↑
ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ	3,166.7	3,417.2	+7.9 ↑
Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին	143,563.9	152,266.8	+6.1 ↑

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

- **Աշխատանքային միջին ամսական կենսաթոշակը նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի նկատմամբ, տոկոս**
- **Աշխատանքային կենսաթոշակի նվազագույն չափը պարենային զամբյուղի նպատմամբ, տոկոս**



ԾՐԱԳԻՐ 1102 - Կենսաթոշակային ապահովություն

Կենսաթոշակների միջին մեծությունը

	2023 Միջին ամսական կենսաթոշակ, դրամ	2024 Միջին ամսական կենսաթոշակ, դրամ
Աշխատանքային կենսաթոշակներ	47,593	50,414
Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	86,164	92,781
Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ	38,296	41,969
ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ	343,166	348,123

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

Կենսաթոշակների շահառուների թվաքանակը 2024 թվականին

	ՀՀ Կենսաթոշակառուներ	ԼՂ-ից բռնի տեղահանված կենսաթոշակառուներ
Աշխատանքային կենսաթոշակներ	467,963	20,439
Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	35,857	1,217
Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ	1,365	40
ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ	818	

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Ծրագրի ռեսուրսների ավելի քան 69 տոկոսը կամ 340.9 մլրդ դրամ կուղղվի կենսաթոշակների տրամադրմանը:
- Կենսաթոշակային համակարգի շահառուները կազմում են 527,699 մարդ, որոնց 4.1 տոկոսը ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցներն են:
- Աշխատանքային կենսաթոշակառուները կազմում են ընդամենը կենսաթոշակառու-ների 92.6 տոկոսը կամ 488,402 մարդ, այդ թվում՝ 20,439 ԼՂ-ից տեղահանված քաղաքացի:
- Միջին աշխատանքային կենսաթոշակը 2024-ին կկազմի 50,414 ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ բարձր է 2,821 դրամով:
- Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների կուտակային հատկացումներին 2024-ին կուղղվի 152.3 մլրդ դրամ ֆինանսավորում:

ԾՐԱԳԻՐ 1205 - Սոցիալական ապահովություն

112.9 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Սոցիալական ապահովության իրավունքի իրականացման ապահովում

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Սոցիալական ապահովության իրավունքի իրականացում

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը պարենային զամբյուղի նկատմամբ, տոկոս



Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ	91,136.3	112,871.0	+23.8 ↑
Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ	38,185.8	46,274.7	+21.2 ↑
Կենսաթոշակ, ծերության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ կամ հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք ունեցող անձանց մահվան դեպքում տրվող թաղման նպաստ	4,059.5	5,050.0	+24.4 ↑
ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռների համաձայն կերակրողը կորցրած անձանց կրած վնասի փոխհատուցում	10.1	9.7	-4.6 ↓
Վնասի փոխհատուցում կերակրողը կորցրած անձանց	3.1	3.1	0.0
ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին սոցիալական աջակցություն	0.2	1.4	+746.4 ↑
ԱՊՀ տարածքում Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների օդային տրանսպորտով մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցում	0.9	2.0	+134.4 ↑
Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում	42,431.8	51,300.0	+20.9 ↑
ՀՀ ՊՆ զինվորական կոչում ունեցող անձնակազմին սոցիալական աջակցություն	0.1	0.2	+148.6 ↑
Աջակցություն «ՀՀ վետերանների միավորում» հասարակական կազմակերպությանը	18.0	18.0	0.0
Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրում	5,089.6	10,212.0	+100.6 ↑
Այլ միջոցառումներ	1,337.4	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

ԾՐԱԳԻՐ 12 05 - Սոցիալական ապահովություն

Ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուների քանակը

	2023	2024
Ծերության նպաստառուներիթիվ, մարդ	20,293	29,426
Հաշմանդամությաննպաստառուների թիվ, մարդ	56,402	59,702
Կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուների թիվ, մարդ	12,732	13,736
Ընդամենը նպաստառուների թիվ, մարդ	89,427	105,994

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրում

	2023	2024
Անկանխիկ եղանակով վճարումներ իրականացնող շահառուների թիվ, մարդ	164,879	230,000
ՀՀ անկանխիկ եղանակով վճարումներ իրականացնող շահառուների թիվ, մարդ		221,618
ԼՂ-ից բռնի տեղահանված անկանխիկ եղանակով վճարումներ իրականացնող շահառուների թիվ, մարդ		8,382
Մեկ շահառուի գծով հետվերադարձի գումար, դրամ		3,700

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Սոցիալական ապահովության ծրագրի շրջանակներում ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ են ստանում թվով 105,994 քաղաքացի, այդ թվում՝ 3,130 ԼՂ տեղահանված քաղաքացի:
- Նպաստառուների թվաքանակը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 16,567 մարդով կամ 18.5 տոկոսով:
- Նպաստառուների 56.3 տոկոսը կազմում են հաշմանդամության նպաստ ստացողները: Ծերության նպաստառուները կազմում են ընդամենը նպաստառուների 27.8 տոկոսը:
- Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրման շահառուների թվաքանակը գնահատվում է, որ 2024-ին կկազմի 230,000 մարդ, որը 2023-ի մակարդակից ավելի է մոտ 40 տոկոսով: Մեկ շահառուի հաշվով հետվերադարձի միջին գումարը կազմում է 3,700 դրամ:

ԾՐԱԳԻՐ 1068 - Ժողովրդագրական վիճակի բարելավում

68.9 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Խթանել ժողովրդագրական վիճակի բարելավումը

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Ժողովրդագրական վիճակի բարելավում և բազմազավակության աճ

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	**53,593.8**	**68,869.7**	**+28.5** ↑
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման ապահովում	4.2	4.2	-0.5 ↓
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրում	20,388.9	29,069.7	+42.6 ↑
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	20,016.3	21,783.2	+8.8 ↑
Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն	2,660.8	606.0	-77.2 ↓
Դրամական աջակցություն ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին	10,441.3	17,406.7	+66.7 ↑
Զոհված զինծառայողների ծնողների՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման որոշ ծախսերի մասնակի փոխհատուցման տրամադրում	82.3	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ



ԾՐԱԳԻՐ 1082 - Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում

22.6 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Կորցրած եկամուտների մասնակի փոխհատուցում

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Անաշխատունակության հետևանքով եկամտի կորստի մասնակի փոխհատուցման ապահովում

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ	21,706.6	22,557.1	+3.9 ↑
Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն	8.7	5.0	-42.5 ↓
Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ	5,094.2	5,880.1	+15.4 ↑
Մայրության նպաստ	16,378.1	16,440.7	+0.4 ↑
Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում	225.6	231.3	+2.5 ↑

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

- Ծրագրի բյուջեի ավելի քան 72.9 տոկոսն ուղղվում է Մայրության նպաստի տրամադրմանը:
- 2024-ին մայրության նպաստ կստանան 40,118 շահառուներ՝ 2023-ի 35,814-ի դիմաց: Շահառուների 5.3 տոկոսը ԼՂ-ից բռնի տեղահանված քաղաքացիներ են:
- Նկատենք, որ շահառուների կազմում 43.7 տոկոսը կամ 17.530-ը աշխատող անձիք են, այդ թվում 100-ը ԼՂ-ից տեղահանվածներ:



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԾՐԱԳԻՐ 1068 - Ժողովրդագրական վիճակի բարելավում

- Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրմանն ուղղվող ռեսուրսները կազմում են ծրագրի բյուջեի ամենամեծ մասը՝ կամ 42.2 տոկոսը: 2024-ին այս նպաստներին ուղղվող ռեսուրսները կաճեն 8.7 մլրդ դրամով և կկազմեն մոտ 29.1 մլրդ դրամ:
- Շահառուների թվաքանակը 2024-ին կկազմի 66,372 մարդ՝ նախորդ տարվա համեմատությաբ աճելով 25,276 մարդով:
- Ծրագրի բյուջեի 31.6 տոկոսը կամ մոտ 21.8 մլրդ դրամ կուղղվի երեխայի ծննդյան միանվագ նպաստների տրամադրմանը:
- Այս նպաստներին ուղղվող միջոցները նախորդ տարվա համեմատությամբ կաճեն 8.8 տոկոսով կամ 1.8 մլրդ դրամով:
- Շահառուների թվաքանակը գնահատվում է, որ 2024-ին կկազմի 38,790 ընտանիք՝ նախորդ տարվա 36,261-ի դիմաց:
- Ընտանիքում առաջին և երկրորդ երեխաների համար նպաստ ստացող շահառուների թվաքանակը կաճի 5.4 տոկոսով և կկազմի 24,753 ընտանիք, երրորդ և չորրորդ երեխաների շահառուները կաճեն 10.3 տոկոսով՝ կազմելով 13,395 ընտանիք, իսկ հինգ և հաջորդ երեխաների դեպքում կկազմեն 642 ընտանիք (աճը՝ 1.3 տոկոս):
- 50,000 դրամ դրամական աջակցություն ստացող, ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքների թիվը 2024-ին կկազմի 28,816 ընտանիք, այդ թվում՝ 427-ը ԼՂ-ից տեղահանված ընտանիք:
- Այս դրամական աջակցության տրամադրմանը կուղղվի 17.4 մլրդ դրամ, կամ ծրագրի բյուջեի 25.3 տոկոսը՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 66.7 տոկոսով, կամ մոտ 7 մլրդ դրամով:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող քաղաքացիների թիվ

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացող շահառուների թիվ



50,000 դրամ դրամական աջակցություն ստացող, ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքների թիվ



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԾՐԱԳԻՐ 1068 - Ժողովրդագրական վիճակի բարելավում

Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն ստացող շահառու ընտանիքներ



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովմանը 2024-ին կուղղվեն 606 մլն ֆինանսական միջոցներ, որը նախորդ տարվա համեմատությամբ կնվազի մոտ 2 մլրդ դրամով կամ 77.2 տոկոսով:
- Ծրագրի տարբեր բաղադրիչներով բնակարանային ապահովման աջակցություն կստանան ընդամենը 4,860 ընտանիք՝ 1,243-ով ավել 2023-ից:
- Էապես կաճի բազմազավակ ընտանիքների նպաստի բաղադրիչով և երիտասարդ ընտանիքների համար կանխավճարի ապահովագրության բաղադրիչով աջակցություն ստացող ընտանիքների թիվը:

ԾՐԱԳԻՐ 1011 - Անապահով սոցիալական խմբերին աջակցություն

31.9 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Աղքատության մեղմում և ծայրահեղ աղքատության կրճատում

- 2024-ին ծրագրի շրջանակն ընդլայնվել է. նրա կառուցվածքում ներառվել են մինչ այդ բյուջետային այլ ծրագրերի շրջանակներում իրականացվող մի շարք միջոցառումներ (տե՛ս աղյուսակ):
- Ծրագրի բյուջեի ավելի քան 98.3 տոկոսն ուղղվում է Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրմանը:

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ԱՆԱՊԱՀՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**26,767.9**	**31,942.4**	**+19.3** ↑
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում	112.1	232.2	+107.1 ↑
Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում	64.0	77.0	+20.3 ↑
Սոցիալական շտապ օգնություն	23.2	27.1	+16.7 ↑
Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում	19.4	55.4	+186.0 ↑
Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում	-	34.8	-
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ	26,549.2	31,411.3	+18.3 ↑
Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում	-	15.8	-
Բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին դրամական աջակցություն	-	27.9	-
Բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում	-	37.2	-
ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում	-	13.7	-
ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր	-	10.1	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

ԾՐԱԳԻՐ 1011 - Անապահով սոցիալական խմբերին աջակցություն

- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների միջին մեծությունը 2024-ին կկազմի 37,000 դրամ:
- Նպաստ կստանան 66,849 ընտանիքներ, այդ թվում՝ 3,183 ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիք:
- 2024 թվականին փուլային տարբերակով կսկսվի ներդրվել ընտանեկան նպաստների նոր համակարգը՝ ուղղված ծայրահեղ աղքատության վերացմանը:
- Աղքատության հաղթահարման տեսանկյունից կարևորվելու են փուլային հաղթահարման մոդելները, աշխատունակ յուրաքանչյուր անձի տնտեսական ակտիվացումը և զբաղվածության ակտիվ ծրագրերում ներառումը:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ

Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող ընտանիքների թիվ



Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող, կոմունալ վարձավճարների փոխհատուցում ստացող, միայնակ կենսաթոշակառուների թիվ

Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների թիվ



ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած, բնակարանների վարձակալության ծախսերի փոխհատուցում ստացող անձանց թիվ



Դրամական աջակցություն ստացող (նվազագույն ամսական աշխատավարձի չափով) ման-կատների շրջանավարտների թիվ



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԾՐԱԳԻՐ 1141 - Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն

5.0 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների, կանանց և երեխաների հիմնական պահանջմունքների և սոցիալական կարիքների բավարարում և ինտեգրում հասարակություն

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող սոցիալական ծառայությունների և դրանց հասցեականության բարելավում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների, կանանց և երեխաների ինտեգրում հասարկություն

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, ԿԱՆԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	4,021.1	5,029.1	+25.1 ↑
Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ	2,389.9	2,647.2	+10.8 ↑
Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ	287.1	833.3	+190.3 ↑
Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ	517.8	355.0	-31.4 ↓
Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ	30.7	32.1	+4.5 ↑
Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ	12.2	12.2	0.0
Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ	93.1	96.7	+3.9 ↑
Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում	436.5	650.6	+49.0 ↑
Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին դրամական աջակցության տրամադրում	3.4	31.4	+824.4 ↑
Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին յուրաքանչյուր ամիս սպառողական զամբյուղին համարժեք դրամական օգնության տրամադրում	1.7	-	-
Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում	235.0	353.8	+50.5 ↑
Մարդկանց թրաֆիքինգի (և/կամ) շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում	1.8	1.8	0.0
Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն	10.7	15.0	+40.8 ↑
Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների համար բնակարանների վարձակալություն	1.4	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

ԾՐԱԳԻՐ 1141 - Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն

- Ծրագրի բյուջեի ավելի քան 96.3 տոկոսն ուղղվում է 5,885 կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի և աջակցության ծառայությունների տրամադրմանը, այդ թվում՝ 1,020-ը ԼՂ-ից տեղեհանված երեխաների:
- Ֆինանսավորման ծավալների աճի տեսանկյունից էական է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ժամանակավոր խնամքի ծառայություններին ուղղված ծախսերի աճը. նախորդ տարվա փաստացի մակարդակի համեմատությամբ աճել է մոտ 3 անգամ:
- Կաճեն թե՛ երեխաների շուրջօրյա և թե՛ ցերեկային խնամքին ուղղվող ծախսերը՝ համապատասխանաբար 10.8 և 49.0 տոկոսով:
- Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրմանն ուղղվող ռեսուրսները կաճեն 50.5 տոկոսով և կկազմեն 353.8 մլն դրամ, որով կկազմակերպվի 111 խնամատար ընտանիքներում 170 երեխաների խնամքն ու դաստիարակությունը, որից 20-ը ԼՂ-ից բնակչության բռնի տեղահանման հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ:
- Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններում ապաստարանի ծառայություններ կտրամադրվեն 60, աջակցության ծառայություններ՝ 1,500 շահառուների, որին կուղղվի 96.7 մլն դրամ: Ի լրումն, ընտանեկան բռնության ենթարկվածներին կտրամադրվի 15 մլն դրամ ժամանակավոր աջակցություն, որը նախորդ տարվա համեմատությամբ կաճի 40.8 տոկոսով:

Երեխաների խնամքի ծառայություններ մատուցող հաստատությունների և շահառուների քանակը



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԾՐԱԳԻՐ 1098 - Բնակարանային ապահովում

4.8 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովմանն աջակցություն

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովվածության բարելավում

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս	Շահառուների թիվ/ ընտանիք
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	2,572.7	4,837.3	+88.0 ↑	-
Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում	-	357.5	-	44
Զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում	473.1	494.0	+4.4 ↑	43
ՀՀ ՊՆ համակարգի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամներին բնակարան ձեռք բերելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրում	460.6	921.0	+100.0 ↑	100
Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության տրամադրում	1,612.2	2,000.0	+24.1 ↑	4,032
Սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցություն	26.5	467.5	1,661.6 ↑	540
Բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում	-	135.0	-	375
Բնակարանային շինարարություն	0.3	462.4	+ ↑	36

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

- Բնակարանային ապահովման ծրագրի բյուջեի 41.3 տոկոսը կամ 2 մլրդ դրամ կուղղվի Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված, 4032 ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովմանը, մասնավորապես՝ անշարժ գույք ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով:
- Սահմանամերձ բնակավայրերում բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցություն կստանան 540 ընտանիքներ:
- Ծրագրի շրջանակում նախատեսվում է նաև պատժից ազատվող այն դատապարտյալ-ներին, ովքեր չունեն բնակության վայր՝ տրամադրել բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում՝ մինչև վեց ամիս ժամկետով: 2024 թվականին միջոցառման շահառուների թիվը կկազմի 375, վարձավճարի ամսական չափը՝ 60,000 դրամ:
- Կբարելավվեն ՊՆ համակարգի՝ 43 անօթևան և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող՝ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, ինչպես նաև 100 զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանները:

ԾՐԱԳԻՐ 1032 - Տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի կազմակերպում և կացարանով ապահովում

4.5 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի կազմակերպում և կացարանով ապահովում

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների որակի բարելավում

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ՏԱՐԵՑ ԵՒ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՒ ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ	3,575.0	4,530.6	+26.7 ↑
Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ	3,025.5	3,326.4	+9.9 ↑
Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ	219.8	248.3	+13.0 ↑
Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում	155.4	171.1	+10.1 ↑
Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայությունների տրամադրում Լոռու մարզում	35.3	35.3	0.0
Անօթևան անձանց կացարանով ապահովում	63.8	70.8	+10.9 ↑
18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի համայնքային փոքր տների շենքային պայմանների բարելավում	42.6	-	-
Շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում	32.6	678.8	+ 1,982.3 ↑

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

ԾՐԱԳԻՐ 1032 - Տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի կազմակերպում և կացարանով ապահովում

- 2024 թվականին շուրջօրյա խնամքի ծառայություններ կստանան 1,285 անձ (այդ թվում՝ 80-ը ԼՂ-ից բռնի տեղահանված), տնային պայմաններում խնամքի ծառայություններ կստանան 1,300 անձ (այդ թվում՝ 100-ը ԼՂ-ից բռնի տեղահանված), ցերեկային կենտրոններում խնամք և բարեգործական ճաշարաններում սնունդ կստանան 300 անձ (այդ թվում՝ 100-ը ԼՂ-ից բռնի տեղահանված):
- Անօթևան անձանց ժամանակավոր կացարանով կապահովվի շուրջ 100 շահառու:
- Կմեկնարկի շուրջօրյա խնամք մատուցող ՊՈԱԿ-ների շենքային պայմանների բարելավման աշխատանքները:
- Խրախուսվում է մրցութային եղանակով ծառայությունների պատվիրակումը ՀԿ-ներին: Ծրագրի շրջանակներում ծառայություններ են մատուցում Առաքելություն Հայաստան, Հայկական կարիտաս, Հայկական Կարմիր Խաչի ընկերություն, Արմավիրի զարգացման կենտրոն, Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա ՀԿ-ները:



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԾՐԱԳԻՐ 1160 - Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն

2.3 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական պահանջմունքների և սոցիալական կարիքների բավարարում և սոցիալական ներառում հասարակություն

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող սոցիալական ծառայությունների հասցեականության և արդյունավետության բարձրացում

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**2,055.2**	**2,298.7**	**+11.8** ↑
Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների ծրագրի իրականացման ապահովում	-	1.9	-
Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում	11.0	11.6	+5.0 ↑
Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ- վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում	196.4	218.6	+11.4 ↑
Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում	78.5	92.1	+17.4 ↑
Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցներով ապահովում	3.5	-	-
Անձնական օգնականի ծառայություն	-	151.0	-
Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում	1,765.8	1,823.4	+3.3 ↑

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

- 2024 թվականին ծրագրի ընդգրկման շրջանակը կընդլայնվի, նախատեսվում է, որ ծրագրի շահառուների կշիռը հաշմանդամություն ունեցող անձանց ընդամենը թվում 11.1 տոկոսից կաճի մինչև 11.8 տոկոս:
- 2024թ. նախատեսվում է ծրագրին ուղղել շուրջ 2.3 մլրդ դրամ՝ 11.8 տոկոսով ավել նախորդ տարվա մակարդակից: Այդ թվում՝ 151.1 մլն դրամը կուղղվի նոր՝ «Անձնական օգնականի ծառայություն» միջոցառման 100 շահառուներին:
- Ծրագրի բյուջեի ավելի քան 79.3 տոկոսը կուղղվի պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրմանը:
- Ցերեկային 10 կենտրոնում սոցիալ-վերականգնողական ծառայություններ կստանան 445 հաշմանդամություն ունեցող անձ, իսկ համայնքահենք փոքր 5 խմբային տներում շուրջօրյա խնամքի ծառայություններ կստանան 70 անձ:

ԾՐԱԳԻՐ 1088- Զբաղվածության ծրագիր

638.5 մլն դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծում

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Կայուն և ժամանակավոր զբաղվածների թվաքանակի աճ

- Ծրագրի բյուջեն կկրճատվի 28.4 տոկոսով:
- 2024 թվականին նախատեսվում է զբաղվածության միջոցառումներում ընդգրկել 1,217 շահառու, որից 942-ը սեզոնային զբաղվածության ապահովման միջոցառման շրջանակներում:
- Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություն-ներին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման նպատակով կհատկացվի 289.6 մլն դրամ, ծառայություններ կստանան 275 շահառուներ:
- Գործազուրկների զբաղվածության ապահովում միջոցառման շրջանակներում գործազուրկին աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցում կտրամադրվի 177 շահառուի համար:

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ	**892.1**	**638.5**	**-28.4** ↓
Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Աշխատանքի Էլեկտրոնային Բորսա» դրամաշնորհային ծրագիր	**47.9**	**58.2**	**+21.5** ↑
Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում	**538.2**	**237.4**	**-55.9** ↓
Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում	**26.3**	**-**	**-**
Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովում	**162.5**	**289.6**	**+78.2** ↑
Զբաղվածության խթանման միջոցառում	**0.1**	**0.9**	**+951.3** ↑
Գործազուրկների զբաղվածության ապահովում	**6.2**	**52.4**	**+744.9** ↑
Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Աշխատանքի Էլեկտրոնային Բորսա» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տեխնիկական հագեցվածություն	**110.9**	**-**	**-**

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

ԾՐԱԳԻՐ 1225 - Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն

15.0 մլրդ դրամ

ՆՊԱՏԱԿԸ՝ Օժանդակել ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքով ընտանիքների առջև ծառացած սոցիալական խնդիրների բացասական հետևանքների մեղմմանը

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների առաջացրած սոցիալական խնդիրների բացասական հետևանքները մեղմելու նպատակով ընտանիքներին դրամական աջակցության տրամադրում

- Ծրագրի շահառուները ԼՂ-ից բռնի տեսահանված անձիք են: Ծրագրի բյուջեն 2023-ին կազմել է ավելի քան 28.7 մլրդ դրամ:
- 2023-ին ծրագրի շահառուների թվաքանակը կազմել է 114,009 անձ, որոնք ստացել են աջակցություն միանվագ դրամական օգնության, բնակվելու և կոմունալ ծառայությունների ծախսերի կատարման օժանդակության և առաջնային սպառողական ծախսերը հոգալու նպատակով:
- 2024-ին կշարունակվի միայն ժամանակավոր կացարանում բնակվելու և կոմունալ ծառայությունների ծախսերի կատարմանը օժանդակելու համար սոցիալական աջակցությունը, որին կուղղվի 15 մլրդ դրամ: նախատեսվում է սոցիալական աջակցությունը տրամադրել 3 ամիս ժամկետով՝ ամսական 50,000 դրամի չափով:

Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024/2023 տոկոս	2023 շահառուների թիվ	2024 շահառուների թիվ
ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԵՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	28,746.0	15,000.0	-47.8 ↓	-	-
Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին միանվագ դրամական աջակցության տրամադրում	11,189.7	-	-	114,009	-
Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին ժամանակավորկացարանում բնակվելու և կոմունալ ծառայությունների ծախսերի կատարմանն օժանդակելու համար սոցիալական աջակցություն	11,185.6	15,000.0	+34.1 ↑	78,162	100,000
Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին առաջնային սպառողական ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցություն	6,370.7	-	-	63,707	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՏԶՀԿ հաշվարկներ

Տնտեսական զարգացման և
հետազոտությունների կենտրոն (EDRC)
+374(0) 55 540 289
info@edrc.am
www.edrc.am